

«Մառա և դուստրեր» ՍՊ ընկերության կողմից Տավուշի մարզի Գանձաքար համայնքում նոր միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ

Արտակարգ իրավիճակների նախարարություն

- Անհրաժեշտ է նախնական գնահատման հայտում (այսուհետ՝ Հայտ) ներառել տեղեկատվություն հակահրդեհային անվտանգության միջոցառումների՝ տարածքի ջրային ռեսուրսների մշտական ապահովման միջոցների վերաբերյալ (նախատեսել տարածքում հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Շինարարական աշխատանքների նախագծում անձնակազմի պատասպարման համար նախատեսել թաքստոց՝ յուրաքանչյուր անձի համար 1 ք.մ մակերեսի չափով:
- Շինարարական աշխատանքների ժամանակ հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ:
- «1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ» գլխի «Ծրագիրը համահունչ է ՀՀ կառավարության «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է երկրի սեյսմակայունության ապահովմանն, անհատական և հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանը և երկրի կայուն զարգացմանը:» պարբերությունը փոխարինել՝ «Ծրագիրը համահունչ է «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարության» նպատակներին և ուղղված է անհատական, հասարակական անվտանգության մակարդակի բարձրացմանն ու երկրի կայուն զարգացմանը:»:
- Հայտում ներքոնշյալ հատվածները վերախմբագրել և կատարել համապատասխան փոփոխություններ.
- «5.2 Սեյսմիկ բնութագրերը» բաժնի .(էջ 29) «Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի, Գանձաքար համայնքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում, գրունտների հնարավոր արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{max}=0.4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:» պարբերությունը հիմնավորել համապատասխան քարտեզով, քանի որ համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի Գանձաքար համայնքը տարածականորեն գտնվում է ոչ թե սեյսմիկ երրորդ այլ առաջին գոտում, որին համապատասխանում է $0.2g$ հորիզոնական արագացման արժեքը:

- Միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման աշխատանքների շրջանակներում Գանձաքար համայնքի համար կազմվել և սահմանված կարգով ԱԻ նախարարի կողմից հաստատվել է 1:10000 մասշտաբի սեյսմիկ միկրոշրջանցման քարտեզը, որի կազմման նպատակով կատարված երկրաֆիզական հետազոտությունների, հաշվարկների արդյունքում ստացվել է նաև սպասվող առավելագույն հորիզոնական արագացումների արժեքների միջակայքը:
- «Կառուցապատման տեղանքում ռելիեֆը ունի բավականաչափ թեքություն դեպի արևելք» .(էջ 28) նախադասության մեջ հստակեցնել թեքության աստիճանը, քանի որ վերոհիշյալ նորմերում շինարարության համար անբարենպաստ հրապարակների երեք չափորոշիչներից երկուսում այն կարևոր դեր է խաղում:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

- ՀՀ Տավուշի մարզի Գանձաքար համայնքում նոր միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հաշվետվության հայտի վերաբերյալ կարծիք տրամադրելու համար մասնագետների կողմից իրականացված տեղազննության արդյունքում պարզվել է, որ դպրոցի շինարարության համար նախատեսված տարածքում պատմության և մշակույթի հուշարձաններ չկան, ուստի՝ նախարարությունը ներկայացված հայտի վերաբերյալ դիտողություններ և առարկություններ չունի:
- Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմին»:

Առողջապահության նախարարություն

- «Մառա և դուստրեր» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Տավուշի մարզի Գանձաքար համայնքում նոր միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, որի վերաբերյալ դիտողություններ չկան:

Միաժամանակ իրականացվող աշխատանքների ընթացքում առաջարկում են ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Շրջակա միջավայրի նախարարություն

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական կազմը» բաժնում ճիշտ նշել ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշման անվանումը և կարգավորման առարկան,
- անհրաժեշտ է ներկայացնել գործունեության ենթակա տարածքի հողաբուսաշերտի օգտագործման կարգը 2011թ. սեպտեմբերի 8-ի N 1396-Ն որոշման համաձայն,
- անհրաժեշտ է ներկայացնել կանչապատման աշխատանքների ընթացքում բերվող հողաբուսաշերտի ձեռք բերման վայրը և պայմանները,
- անհրաժեշտ է ներկայացնել գոյություն ունեցող 9 ծառերի վերատնկման պայմանները, տեղափոխման և պահպանման միջոցառումները,
- անհրաժեշտ է ներկայացնել շինարարական աղբի կուտակման վայրը,
- անհրաժեշտ է պարզաբանել բարձր դասարանների համար դասասենյակների բացակայության պատճառը: